«Ուղղությունն ընտրում ես դու» արշավի մասին մանրամասներ

Ներածություն.

- ԱրարատԲանկն իր Mastercard World Travel քարտապանների համար մեկնարկում է «Ուղղությունն ընտրում ես» արշավը (այսուհետ՝ Արշավ):
- Արշավը իրականացվելու է սույն թվականի նոյեմբերի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

Ընդհանուր դրույթներ.

- Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.araratbank.am կայքում:
- Արշավին մասնակցության համար որևէ վճար սահմանված չէ:
- Հաղթող մասնակիցներին հաստատում է ԱրարատԲանկը՝ համապատասխան տվյալների ստուգումներն իրականացնելուց հետո: ԱրարատԲանկն իրավասու է կապ հաստատել հաղթող մասնակցի/ների հետ՝ նրանց նույնականացնելու, իսկությունը հաստատելու համար, որից հետո միայն մրցանակը հանձնելու: Եթե հաղթող մասնակիցը չի պատասխանում հեռախոսազանգին (առավելագույնը 3 զանգ), հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ նկատվում է անհամապատասխանություն, ապա Բանկն իրավասու է տվյալ մասնակցի հաղթանակը չեղյալ համարել:

Մասնակցության պայմաններ.

- Արշավին կարող են մասնակցել ԱրարատԲանկի այն Mastercard World Travel ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ քարտապանները, ովքեր նոյեմբերի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Հայաստանում և արտերկրում Mastercard World Travel քարտով կիրականացնեն դրամային կամ արտարժութային անկանխիկ գործարքներ:
- Արշավի շրջանակում յուրաքանչյուր 10 անկանխիկ գործարքի համար քարտապանը կստանա ակցիայի մասնակցության 1 կտրոն և հնարավորություն կունենա շահելու 5 ուղևորության փաթեթներից մեկը՝ նախատեսված երկու հոգու համար:
- Արշավի ընթացքում որպես վճարում չեն դիտարկվում վարկի մարումները (վարկի, տոկոսի մարում և այլն), հեռահաղորդակցման ծառայությունների (հեռախոս, ինտերնետ, tv), կոմունալ ծառայությունների վճարումները (գազ, էլ.էներգիա, ջրմուղ-կոյուղի և այլն), էլեկտրոնային փողերը, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուգանքները, օրենքով պարտադրված վճարները, մուծումները, պետական և տեղական բյուջե ուղղված հարկերի և տուրքերի վճարները, կազինո և շահումով խաղերը, խաղադրույքները, ապահովագրությունը:
- Վճարումների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվելու վճարման կատարման ամսաթիվը:
- Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սույն Պայմաններով

- սահմանված առավելագույնը մեկ մրցանակ: Մրցանակը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:
- Գովազդային վիճակախաղի հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ Comment Picker կամ նմանատիպ ծրագիր):
- Գովազդային վիճակախաղի ամփոփումը կցուցադրվի ԱրարատԲանկի ֆեյսբուքյան էջով՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեռարձակման օրը և ժամը կհրապարակվի նախապես՝Բանկի սոցիալական էջերում:
- Գովազդային վիճակախաղը կամփոփվի և մրցանակները հաղթողներին կհանձնվեն մինչև 2026 թվականի հունվարի 30-ը (եթե հաղթող մասնակիցը մինչ այդ ժամկետը ներկայանա Բանկ):
- Գովազդային վիճակախաղի ամփոփման ընթացքում հաղթող ոչ համապատասխան մասնակիցների կամ հաղթող այն մասնակիցների դեպքում, ովքեր կհրաժարվեն նվերից, Բանկն իրավասու է՝ անհրաժեշտությունից ելնելով ծրագրի միջոցով ընտրել նոր մասնակիցներ:
- Արշավին չեն մասնակցում ԱրարատԲանկի աշխատակիցները:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի կամ «Ուղղությունը ընտրում ես դու» արշավի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել www.araratbank.am կայք կամ զանգահարել 010 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով, WhatsApp/Viber +374 41 59 23 25/+374 98 19 23 23 հեռախոսահամարներով:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: